«Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն» (CARD) հիմնադրամի կողմից իրականացվող «Սյունիքի կայուն և արդյունավետ տնտեսական զարգացում. գյուղմթերքի վերամշակում» (SEEDS) ծրագիրը , որը ֆինանսավորվում է Եվրոպական Միության (ԵՄ) և Ավստրիական Զարգացման Համագործակցության կողմից «Սյունիքի վերականգնման, դիմակայունության և զարգացման ծրագրի» (R2D Սյունիք) ներքո:

Դրամաշնորհային ծրագիր

Աջակցություն գյուղմթերքի վերամշակման միկրո, փոքր և միջին ձեռնարկությունների ինչպես նաև բիզնես գաղափար ունեցող անհատների համար:

<u>Համապատասխանելիության չափանիշներ</u>

Դրամաշնորհային ծրագրին կարող են մասնակցել այն դիմորդները, ովքեր բավարարում են հետևյալ պահանջներին՝

1. **Իրավաբանական կարգավիճակ կամ գրանցման պատրաստակամություն**
   - Դիմորդը կարող է լինել ֆիզիկական անձ, անհատ ձեռնարկատեր կամ կազմակերպություն,
   - Ֆիզիկական անձը ծրագրի շրջանակներում դրամաշնորհ ստանալու դեպքում կպարտավորվի գրանցվել որպես միկրո, փոքր կամ միջին ձեռնարկություն (ՄՓՄՁ) և իրականացնել օրինական տնտեսական գործունեություն:
2. **Գտնվում է ծրագրի թիրախային տարածքում**
   - Դիմորդը պետք է մշտական գործունեություն ծավալի կամ պատրաստակամ լինի գործունեություն սկսել ծրագրի կողմից նշված մարզում:
3. **Ներկայացված է բիզնես գաղափար կամ գործող բիզնեսի ընդլայնման ծրագիր**
   - Դիմումի շրջանակներում պետք է ներկայացվի նորաստեղծ կամ գործող բիզնեսի կոնկրետ ծրագիր, որի միջոցով հնարավոր է ստեղծել տնտեսական արժեք և նպաստել տեղական զարգացմանը:
4. **Համաֆինանսավորման պատրաստակամություն**
   - Դիմորդը պետք է պատրաստ լինի համաֆինանսավորել ներկայացված ծրագիրը առնվազն 40%-ի չափով (դրամական ներդրումներ) :

5. **Մեկ դիմորդ՝ մեկ հայտ սկզբունքը**
   - Յուրաքանչյուր դիմորդ կարող է ներկայացնել միայն մեկ հայտ: Նույն անձի կամ կազմակերպության կողմից մի քանի հայտ ներկայացնելը կդիտարկվի որպես անհամապատասխանություն:
6. **Չի ստացել SEEDS-ի կամ գործընկեր կազմակերպությունների կողմից նույնանման աջակցություն**
   - Դիմորդները, ովքեր նույն ծրագրի շրջանակներում արդեն ստացել են դրամաշնորհ <<Ջինիշյան>> հիշատակի հիմնադրամի կամ <<Վիններթ Հայաստան>> հիմնադրամի կողմից, չեն կարող կրկին դիմել այս դրամաշնորհային ծրագրին՝ շահառուների բազմակի աջակցությունը բացառելու նպատակով:
7. **Հայտը ներկայացվել է սահմանված ժամկետում և համապատասխան ձևաչափով**
   - Հայտը պետք է ներկայացվի ամբողջական, սահմանված ձևաչափով և վերջնաժամկետին համապատասխան:

1. Ընդհանուր տեղեկություններ

Այս դրամաշնորհային ծրագիրը նպատակ ունի ամրապնդել սննդի վերամշակման կարողությունները տեղական շուկայական համակարգերում՝ տրամադրելով աջակցություն բացառապես գյուղմթերք վերամշակող ընկերություններին: Առաջարկվող ծրագիրն ուղղված է Սյունիքի միկրո, փոքր և միջին բիզնեսների կայուն զարգացմանն ու տնտեսական աշխուժացմանը՝ գյուղատնտեսական վերամշակման կատարելագործման և հասցեական աջակցության ծառայությունների ընդլայնման միջոցով:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է ներգրավել առնվազն 40 միկրո, փոքր և միջին ձեռնարկությունների (ՄՓՄՁ)՝ որոնց առնվազն 20%-ը կանանց կողմից կառավարվող բիզնեսներ կլինեն: Ընտրության գործընթացը կլինի թափանցիկ և

մրցակցային՝ հիմնված սահմանված չափանիշների վրա, որոնք կարտացոլվեն մրցույթի հայտարարությունում: Ուշադրության կենտրոնում է արտադրողականության բարձրացումը, համապատասխանությունը սննդի անվտանգության չափանիշներին և տեղական մատակարարման շղթայի կապերի միջոցով ներառական աճի խթանումը:

2. Նպատակներ

• Բարձրացնել գյուղմթերք վերամշակող ձեռնարկությունների/անհատների մրցունակությունը և արտադրողականությունը:

• Բարելավել սննդի անվտանգությունը, որակը և բերքահավաքից հետո հավելյալ արժեքի ստեղծումը:

• Խթանել առավել փոքր տնտեսություն ունեցող անհատների/ֆերմերների մասնակցությունը ծրագրի արժեշղթային:

• Խրախուսել համայնքային ներգրավումը՝ համատեղ գյուղմթերքի վերամշակման մոդելների միջոցով:

Ծրագրի առաջնային թիրախային խմբերն են.

. Գյուղմթերքի վերամշակման ոլորտում գործող միկրո, փոքր և միջին ձեռնարկություններ, ներառյալ ինչպես արդեն իսկ գործող, այնպես էլ նորաստեղծ ձեռնարկությունները, բիզնես գաղափար ունեցող անհատները:

• Ձեռնարկատերերը և փոքր բիզնեսի սեփականատերերը, այդ թվում՝ երիտասարդները, տեղահանված անձինք և էթնիկ փոքրամասնությունները, որոնք բախվում են շուկա մուտք գործելու խոչընդոտների հետ:

3. Աջակցության շրջանակը

3.1 Ֆինանսավորման ուղղությունները

Աջակցություն կստանան միայն գյուղմթերք վերամշակող ընկերությունները, բիզնես գաղափար ունեցող անհատները, որը կարող է ներառել

• Մսնդի/գյուղատնտեսական վերամշակման մեքենաներ և սարքավորումներ

• Բերքահավաքից հետո մշակման և պահպանման գործիքներ

• Որակի վերահսկման գործիքներ (օրինակ՝ լաբորատոր սարքավորումներ) և այլն։

3.2 Աջակցության եղանակ

- Մեկ ձեռնարկության/անհատի համար աջակցության առավելագույն չափը 8,000 եվրո է՝ ապրանքային տեսքով։
- Բոլոր գնումները կիրականացվեն ծրագիրը իրականացնող կազմակերպության կողմից՝ ծախսերի արդյունավետությունը, տեխնիկական համատեղելիությունը և համապատասխանությունն ապահովելու համար։
- Ծրագրի շրջանակներում դրամաշնորհներից բացի կտրամադրվի նաև աջակցություն վերապատրաստումների և կարողությունների զարգացման միջոցով։

4. Ծրագրի Փոքր Դրամաշնորհների (ՓԴ) հատկացման պայմանները սահմանափակումները

Ենթածրագրերն իրականացվելու են Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզում։ Ուստի, ինչպես գործող, այնպես էլ նորաստեղծ բիզնես

նախաձեռնությունների **գործունեության հասցեն** պետք է գտնվի Սյունիքի մարզում՝ անկախ հաշվառման իրավաբանական հասցեի գտնվելու վայրից:

- Դրամաշնորհները տրամադրվելու են բացառապես ապրանքային տեսքով՝ սարք/ սարքավորումներ, գումարային դրամաշնորհներ չեն տրամադրվի;
- Շահառուների դրամային/սեփական ներդրումը պետք է կազմի **ծրագրի կողմից ներդրվող սարքավորման/ների արժեքի առնվազն 40%-ը;**

- Մեկ շահառուի մասով առավելագույն ֆինանսավորումը չի գերազանցի 8,000 եվրո; Եթե շահառուն ցանկանա գնել ավելի թանկ սարքավորում, ապա տարբերությունը պետք է վճարվի շահառուի կողմից, ինչը կդիտարկվի վերջինիս կողմից որպես ներդրման մաս և առավելություն:
- Ենթածրագրերի ընտրությունն իրականացվելու է ըստ ծրագրի չափանիշների:
- ՓԴ աջակցությունը չի կարող ներառել շրջանառու միջոցներ (աշխատավարձեր, ներդրանքներ, կոմունալ վճարներ), հարկեր, շինարարական ծախսեր, վերամշակման համար հումքի ձեռք բերում և այլն:

5. Ընտրության գործընթաց

5.1 Դրամաշնորհային աջակցության հայտարարություն

Դիմումների հայտարարություն կհայտարարվի աջակցության հստակ տեղեկատվական թերթիկով, որը կներառի.

• Որակավորման պահանջները (միայն գյուղմթերք վերամշակող ընկերությունների/անհատների համար)

• Դիմումների գործընթաց և ժամանակացույց

Գնահատման չափանիշներ

• Աջակցության շրջանակը և ակնկալիքները

5.2 Գնահատման չափանիշներ

Գրանտային հայտերը կընտրվեն՝ հիմնվելով ծրագրերի իրագործելիության վրա տեխնիկական, շուկայական և ֆինանսական առումներով: Որակավորված վերամշակող ՄՓՄՁ-ները, բիզնես գաղափար ունեցող անհատները կգնահատվեն հետևյալ չափանիշների հիման վրա.

- Բիզնեսի կենսունակություն և աճի ներուժ
- Վերամշակման և հավելյալ արժեքի ստեղծման հնարավորության ծավալներ
- Մասնավոր/ինստիտուցիոնալ ներդրումները համաֆինանսավորելու կամ օգտագործելու կարողություն
- Աշխատատեղերի ստեղծման ներուժ
- Սարքավորումների սպասարկման և երկարաժամկետ օգտագործման հանձնառություն
- Տեղական մատակարարման և մատակարարման շղթայի ներառման մեջ ներգրավվածություն
- Լրացուցից գործոն, որը հաշվի է առնվելու՝

✓ Կանանց ներգրավվածություն / կին թիմի ղեկավարի առկայություն,

✓ Համատեղ օգտագործման մոդելների ստեղծման հնարավորություն,

✓ Էթնիկ փոքրամասնություններ, Արցախից բռնի տեղահանվածներ և այլն,

✓ Գրանցման պատրաստակամություն:

Քանի որ տրամադրվելիք դրամաշնորհների քանակը սահմանափակ է, ուստի գործընթացը կլինի մրցակցային և կընտրվեն առավել մրցունակ հայտերը: Չընտրված հայտատուները հնարավորություն կունենան մասնակցելու ծրագրի կողմից առաջարկվող վերապատրաստման դասընթացներին: